

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԵՐ:

Ելեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և Նշել անհրաժեշտ տվյալները:



Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների Ելեկտրոնային տարբերակները կայթում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Утп түшілтөрө – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: info@artsakhlib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>



ՃԵՐՎԱՆԴՌԱԴԵ
ԱԼԻՆԱ

፭.፻፷፻ 8421

G 661


Կազմող՝ Գ. Ն. Երգնելյան

Ալեքսանդր Շիրվանզադե

Պատմվածքներ (կազմ.՝ Գ. Ն. Երզնկյան), Երևան, 1986. — 175էջ:

¶ 661 Գողոսուն պարզ երևում է հեղինակի լավագույն պատմվածքների մի շարք Դրանցուն պարզ երևում է գրողի մարդասիրությունը, հայրինասիրությունը, նրա ստեղծագործությունը ստորաբարչության, շողոքությունը, մարդու ստոր արարենքի նկատմամբ:

C 4702080100 (51) 206 1986
702 (01) 1986



Александр Ширванзаде
РАССКАЗЫ
(на армянском языке)
Издательство «Луйс»
Ереван—1986

© «Էպիզո» հրատարակչություն, կաղմելու համար, 1986



ԱԼԻՒՆԱ

I

Այս անգամ իմ կովկասյան վաղեմի բարեկամ բժիշկ Տիգրան Ախուրյանը սովորականից ավելի էր տրամադրված զրույց անելու:

Մրճարանը, որ մենք նստած էինք, լի էր հաճախորդներով, բայց մենք ունեինք մի անկյուն, որ հեռու էր աղմուկներից ու իրարանցումից: Բացի այդ, երկուսս էլ վաղուց արդեն ընտելացել էինք Փարիզի փոթորկալի կյանքին և այլևս անուշադիր էինք դեպի այն բոլոր ունայնությունները, որ այնքան շփոթեցնում ու ներլայնացնում են լուրաքանչլուր նորեկի, մանավանդ, երբ այդ նորեկը ելքոպացի չէ: Գիտեինք առանձնապես լատինական արվարձանի ներկված ու շպարված հորիների շինծու ժպիտների, հանդունքն քրքիջների և թափանցիկ ակնարկների իսկական արժեքը: Եվ սիրում էինք նրանց:

— Աղեքսանդր, — ասաց բժիշկը, զարեցրի դատարկ բաժակը հրելով մի կողմ, — ես այսօր տրամադիր եմ զլուխս մի փոքր տաքացնելու: Կընկերանա՞ս ինձ:

— Հաճուքով, — պատասխանեցի ես, որ նուխակես զգում էի պահանջ մշուշապատ տրամադրությունս մի քիչ զվարթացնելու:

Նա հրամայեց անցնող սպասավորին բերել մեզ համար արսենու:

— Ասա, խնդրեմ, որու ինչպես ես ըմբռնում սեր ասված բանը, — հարցրեց նա հանկարծ, իր հուժկու բազուկները գնելով մարմարյա սեղանի վրա և իր խոշոր ու խելացի աշքերի խուզարկու հայացքն ուղղելով ուղղի իմ աշքերի բիբերին:

Ասում եմ հանկարծ, որովհետև հարցն ինձ համար միանգամայն անսպասելի էր: Մի մարդու կողմից, որ մեր քանամյա ծանոթության և այնքան հաճախ հանդիպումների ընթացքում երբեք չէր խոսել սիրո մասին: Զնայելով, որ նրա կյանքը լի էր արկածներով: Երբ ընկերական շըրջաններում խոսք էր բացվում կանանց վերաբերմամբ, բժիշկ Ախուրյանը լուսում էր: Նա թողնում էր, որ շաղակրատեն ուրիշները, որ նրանից շատ բան կարող էին լսել ու շատ բաներ սովորել: Երկի, որպես կյանքի փորձառություն ունեցող մեկը, գիտեր, որ սովորաբար այն մարդիկ են շատ խոսում կանանց մասին, որոնք քիչ են արժանացել կամ բնավ շեն արժանացել նրանց ուշագրությանը:

Չեմ հիշում ինչ պատասխանեցի բժշկի հարցին, հիշում եմ միայն, որ նա ներողամտարար ժպտաց:

— Լսիր, — ասաց նա, մի քանի վայրկյան մտածելուց հետո, — այսօր ես ուզում եմ պատմել քեզ իմ կյանքից մի դեպք, որի նմանը շեմ կարծում, թե պատահած լինի ինձանից մի քիչ ավելի խելոք որևէ մեկի կյանքում: Կկամենա՞ս լսել:

— Մեծ հաճուքով, — շտապեցի արտասանել ես ամենայն անկեղծությամբ, վասնդի գիտեի, որ բժիշկ Ախուրյանի պատմվածքը չի կարող լինել անհետաքքրական, քանի որ նա յուր դիմացինին շծանձրացնելու շափ խելոք է:

Նա համեմեց արսենու շաքարով, խառնեց ջրի հետ, խմեց մի քանի ումայ և այսպես սկսեց իր պատմվածքը.

— Անցքը պատահել է վաղուց, այն ժամանակ, երբ ես հազիկ տասնունը տարեկան էի: Ես նոր էի ավարտել գիմնազիական դասընթացս և պատրաստվում էի ուղևորվել մայրաքաղաք համալսարան մանելու: Գավառացի պատանի էի, մարմնապես առողջ ու կայտառ, ինչպես երկու տարեկան մի հորթ, ու բարոյապես տակավին անապական, ինչպես գառնուկ: Զնայելով, որ Թիֆլիսն ու իմ վաղաժամ փշացած դասընկերները բավական զորավոր էին ինձ ևս փշացնելու համար: Կի՞ն: Օօ՛, բնավ շի մտածել նրա մասին: Մե՞ր կամ սիրահարություն: Գաղափար անգամ չունեի այդ երգերի մասին:

Նախքան կովկասից հեռանալը ես պարտավոր էի գնալ Գողթան դա-

վառ՝ ծնողներիս հրաժեշտ տալու համար: Բայց ճակատագրի մի գաղտնի հրամանով ճամփորդությունս հետաձգեցի մինչև օգոստոսի վերջը, երկի, որպեսզի պատահեր իմ կյանքում այն, ինչ որ պատահեց: Նույն ճակատագրի թելազորությամբ էր, որ որոշեցի կացարանս փոխել Փնտրեցի և առաջին իսկ օրը գտա մի բավական ընդարձակ, մաքուր և լուսավոր սենյակ, քաղաքի ոչ այնքան հետ ընկած փողոցներից մեկում: Տանտիրուհիս մի բարեմիտ այրի էր, ազգով ուսւ: Նրա ամուսինը պիտական ինչոր հիմնարկության մեջ աննշան պաշտոնյա էր եղել և նոր էր մեռել, թողնելով երկու որդերեւ:

Տեղափոխվելուս հետևյալ օրը մի բան գրավեց ուշագրությունս: Դա ոչ այնքան մեծ, երկու կամ, ճիշտն ասած, երեքհարկանի մի տուն էր, որի թե՛ վարի ու թե՛վերի դռներն ու լուսամուտները գոց էին: Մոալլ ու տիսուր էր այդ տան տպավորությունը: Զնայելով, որ ո՞չ խարխուզ էր և ո՞չ նոյն նիսկ այնքան հին, որքան ազ ու ձախի տները: Նրա փափուկ լուսամուտների փեղկերն ու ապակիները ծածկված էին փոշու թանձր շերտերով:

Այս համգամանքը ցույց էր տալիս, որ տոմար ամայի է և վաղուց վերին հարկի դռներին փակցված էր մի կտոր թուղթ: Բայտ երևութին զահայտագիր էր, թե տունը վարձով էր արվում: Ասում եմ ըստ երեսութին, որովհետև անձրեներից և արեգակից նրա գրությունը չնշվել էր ու անհետացել: Այդ դռները փողոցի մակերեսից բաժանված էին միայն հինգ թե՛վեց աստիճան ունեցող մի քարե սանդուղքով: Որը մեկ կամ երկու անցորդ բարձրանում էր այդ սանդուղքով և փորձում կարգալ հայտագիրը: Եվ ամենքը հեռանում էին մի տեսակ տարակուսանքով: Երկի զարմանում էին, որ տանտերը նեղություն չի կրում զնշված հայտագիրը վերանորոգելու Միկնալոյն ժամանակ ես նկատում էի, որ հարևան տան ներքին հարկում արհեստանոց ունեցող կոշկակարը անխոտագիրներն մոտենում է յուրաքանչյուրին, որ փորձել է կարգալ հայտագիրը, և խորհրդավոր գեմքով ինչ-որ շշնչում նրա ականչին: Նկատում էի, որ մարդը, կոշկակարին լսելուց հետո, մի տեսակ երկուղած հայացք էր ձգում տան վրա ու հեռանում, գլուխը երեքելով:

Այդ կոշկակարը մի նիհար, փոքրահասակ մարդ էր, ալիսառ, ցանցառ մորուսով և ծիսակոտի ծխից դեղնած բեղերով: Զգիտեմ նա ծո՞ւլ էր, թե՞ գործ քիչ ուներ, օրվա մեծ մասը նստած էր իր արհեստանոցի առջև և նայում էր անցորդներին կամավոր լրտեսի զննող հայացքով: Թվում էր, որ ուրիշների կյանքը նրան ավելի է հետաքրքրում, քան իր երեք մանկահասակ զավակների վիճակը: Զկային ամբողջ փողոցում ավելի աղբայր հաղոված և ավելի անմաքուր երեխաները, քան այդ մանուկները:

Օրը մինչև երեկո նրանք դուզուում էին, լալիս, ծիծաղում և անցորդների հետևից քարեր ձգում:

— Պոլինա Նիկոլաևնա, — դարձա ես մի օր տանտիրուհու, — այդ դիմացի տունն ո՞ւմ է պատկանում:

Այրիի գեմքը մայվից, և նա, հառաջելով, արտասանեց.

— Չեմ ճանաշում, չեմ էլ տեսել: Ասում են շատ հարուստ մի իշխան է:

— Ինչո՞ւ է ամայի այդ տունը:

— Որովհետև ոչ ոք չի կարող նրան վարձել:

— Պատճառը:

— Պատճառը, որ նա անիժված է:

— Անիժվա՞ծ, — գոշեցի ես հնտաքրքրությամբ:

— Այո, վեց տարի է նա դատարկ է, և ոչ մի մարդ չի համարձակվում այնտեղ ուտք դնել:

Եվ տանտիրուհի պատմեց հետևյալը.

Ութ տարի առաջ տանը բնակվելիս է եղել իր ընտանիքով մի վաճառական: Ջմենը նրա շրս զավակներից երկուսը հիվանդացել են բիացավով ու մեռել: Վաճառականը, իր կնոջն ու մյուս զավակներին, տխուր հիշողոթյունից ազատելու համար, տեղափոխվել է ուրիշ տուն եկել մի ուրիշ ընտանիք: Այս անգամ մի հրեա ժամագործ իր կնոջ ու երկու փոքրիկների հետ: Նույն ձմեռվա վերջին այդ փոքրիկներն էլ հիվանդացել են ու մեռել: Ճիշտ այդ միջոցին մեռել է նույն տան վարի հարկում կենող մրգավաճառի միակ զավակը, — ինը տարեկան մի սիրուն տղա: Թե՛ հրեան և թե՛ մրգավաճառը թողել են այդ անբախտ տունը և տեղափոխվել ուրիշ տեղ: Վերջապես, հետեւյալ աշնանը տան վերին հարկը վարձել է մի վրացի քահանա:

— Այդ այն ժամանակ էր, — շարունակեց տանտիրուհիս, — երբ մենք էլ նոր տեղափոխվել էինք այս բնակարանը: Ամուսինն ոնք կենդանի էր: Վրացի քահանան ծեր մարդ չէր, բայց այնքան նիշար էր ու այնքան վախտ, որ կարծես, թե միշտ, վար կընկնի: Նա ուներ երեք փոքրիկներ, մեկը մյուսից հազիվ մի տարով մծէ: Արի տես, որ խեղճ երեխաներն էլ հիվանդացան հաջորդ ձմեռը ու նրանք էլ մեռն՝ մեկը մյուսի ետեկից, մի շաբթիվ մեջ, Ա՛Յ, պարոն երբեք շեմ մոռանալ այդ օրը: Մենք կարծում էինք, որ քահանան ու իր կինն էլ կիսելագարվեն, այնքան դատն էր նրանց վիշտը: Բայց շիելագարվեցին ու շմեռան էլ: Օօ՛, չեմ մոռանալ մանավանդ այն օրը, երբ նրանք տեղափոխվում էին այդ տնից, ծս

ահա, այն լուսամուտի մոտ կանգնած, մտիկ էի անում: Բոլոր հարևանները փողոց էին թափվել: Երբ տան կահկարասին բարձեցին սալլի վրա, վերջացրին, զուրս եկավ քահանան իր կնոջ հետ: Վշտից էր, թե կատաղությունից երկուսի էլ աշքերը վառվել էին կրակի պես: Քահանան գողդողում ոտքերով իշավ սանդուղքից, կանգնեց փողոցի մեջտեղում, երեսը դարձրեց այդ տանը, աշ ձեռք բարձրացրեց վեր ու բարձր ձայնով արտասանեց.

«Անիժվիս դու, ով չար ոգիների բույն, անիժվիս քո տերը, անիժվիս քո շինողը: Անիժում եմ քեզ, թող երբեք, երբեք մարդկային ձայն լսվի քո պատերի մեջ: Թող քո տերն էլ թշվառանա, ինչպես ես թշվառացա»:

— Ասում են, — շարունակեց տանտիրուհիս, հառաջելով, — նույն ձմեռն իսկ իշխանի կինը և հինգ զավակներից երկուսը մեռան: Ահա, պարոն, այդ ժամանակից դեռ ամայի է այդ տունը և ոչ ոք չի ուղում նրան վարձել: Եվ ով ուղում է վարձել, շգիտենալով, որ տունն անիժված է, ահա այն կոշկակարը նախազգուշացնում է նրան, պատմելով ամեն բան: Այժմ նա հավատացնում է ամենքին, որ իրը թե դիշերներն ինչ-որ ձայներ է լսում այդ տնից, և իրը թե այնտեղ ինչ-որ շար ոգիներ են ապաստանել... Ո՞վ գիտե...

Երբ տանտիրուհիս հեռացավ, ես զգացի մի տարօրինակ թախիծ: Այդպես, ուրեմն, այդ թշվառ տան վրա ժանրացած է անեծք: Եվ ինչո՞ւ դուցի միայն այն պարզ պատճառով, որ վաճառականի զավակները թիւացվով մեռնելուց հետո, տգնտաբար մոռացել են տունը ախտահարության ենթաքիւու: Նույն են արել և հրեա ժամագործի զավակները մեռնելուց հետո: Ես կարեկցեցի թշվառ տանը՝ որպես մի շնչավոր էակի և այդ օրից իմ սիրտը լցում էր գանությամբ ամեն անգամ, երբ հայացքս ընկնում էր նրա վրա: Նրա փակ լուսամուտները թվում էին ինձ զագաղի մեջ հանգստ մեռելի կոպեր, այնքան ծանր էր ապավորություն:

— Բայց մի օր բացվեցին այդ փակ աշքերը, և ահա ինչպես, — շարունակեց բժիշկ Ախուրյանը, խմելով արսենտի վերցին կաթիները: — Իրինաղեմ էր ես նստած էի լուսամուտին առջև և կարդում էի նոր լույս տեսած մի ուսւերեն վեհու: Գլուխս բարձրացնելով՝ բարե սանդուղքի վրա տեսած մի բարձրահասակ մարդ: Նա աշխատում էր դեղնած թղթի կտորը կարգալ: Խճարկե, ոչինչ չկարող առողջ լուսամուտի վրացին շաբթիվ առողջ լուսամուտի վրացին շաբթիվ: Դա տարօրինակորեն զրդույն և տարօրինակորեն անշարժ ու սառը մի կերպարանք էր: Նրա ուղղագիծ, երկայնածք գիշեց, խնամքով կրծատած շիկալում և կարծես քիչ ձերմակած ընլացքը, մաքուր սափրած կզակը, նրա քայլվածքը, ձեռքը և, վերցապես, անըստգյուտ եվրոպական տարագի հագուստը ոչ մի նմանու-

թյուն չունեին տեղական տիպերի հետ երկում էր, որ օտարերկրացի է և նորեկ:

Նա նայեց սառը հայացքով աջ ու ձախ, ըստ երկուլիթին, փնտրելով մեկին, որից տեղեկություններ կարողանար ստանալ այդ տան մասին, ձիշտ այդ պահին մոտեցավ նրան անխուսափելի կոշկակարը և հաղորդեց այն, ինչ որ հաղորդում էր ամենքին: Տունը վարձով է տրվում, բայց անիծված է:

Ես կարծում էի, հարկավ, որ բարձրահասակ անծանոթը անմիջապես կհեռանա անիժյալ տնից մյուսների պես: Պատահեց հակառակը: Թվացինձ, որ նա հետաքրքրվեց կոշկակարի խոսքերով և պահանջեց մանրամասնություններ: Հետո նա, վճռական մի շարժում անելով, ինչ-որ պատվիրեց կոշկակարին, որ դժո՞՛ ղեմքով հեռացավ: Մի քանի վայրէյան անցած բարձրահասակ մարդուն մոտեցավ մեր փողոցի գավթապահներից մեկը, որին հանձնված էր անիժյալ տան հսկողությունը: Բարձրահասակ մարդը ձեռով մի զրական շարժում արալ: Գավթապահը առաջնորդեց նրան դեպի քարե սանդուղքը, բաց արավ իր գրպանից դուրս բերած մի բանալիով անիժյալ տան վերին հարկի դռները, և երկուքն էլ մտան այնտեղ: Մի քանի բոպե անց՝ նրանք դուրս եկան, և ես տեսա, որ բարձրահասակ մարդը տվեց գավթապահին մի բուռ թղթադրամ և ինչ-որ պատվիրեներ ու հեռացավ հանդարտ քայլերով:

Պարզ էր, որ նա վարձեց բնակարանը: Արդարեւ, հետեւյալ օրը վաղ առավոտյան վերի լուսամուտները բացվեցին: Ես նկատեցի, որ գավթապահը մի ուրիշ մարդու հետ սենյակները մաքրում են: Նույն օրը իրիկնադիմին անիժյալ տան առջև կանգնեցին երկու ծանր բենդավորված սայլեր: Կաչկարասի էին և խոհանոցի իրեր: Բոլորն էլ նոր գնված: Սայլերը դատարկվեցին, իրերը ներս տարվեցին, իրիկնադիմին գտների առջև կանգ առավ մի փակ կառք: Նրա միջից դուրս եկավ նախ բարձրահասակ տղամարդը, հետո պարզ հագնված մի կին, ապա նրանց օգնությամբ երեսը թանձր բողով ծածկված մի ուրիշ կին, որ արագ քայլերով, գրեթե վագելով բարձրացավ քարե սանդուղքով ու մտավ տուն:

Այս բոլորը կատարվում էր այնպիսի լուսիթյամբ ու խորհրդավորությամբ, որ ես հետաքրքրվում էի ավելի ու ավելի:

Հաշորդ առավոտ լուսամուտները մի երկու ժամ ևս բաց մնացին, այժուհետև նորեն փակվեցին ճիշտ այնպես, ինչպես առաջ, ես նորեն սկսեցի կարելցել անիժյալ տանը: Կարծես զա մի մեռյալ էր, որ մի վայրկյան բաց արավ իր աշքերը, նայեց շուրջը, ծանր հառաչեց և նորեն մտավ իր սավանի մեջ:

Բժիշկ Ախուրյանը հառաջեց և սպասալորին հրամայեց մի-մի բաժին ևս արսենտ բերել: Եվ, մի քանի անգամ ծխախոտի ծուխը ուժին կլանելով, շարունակեց:

Երեկոյին տանտրուհիս մտավ սենյակս ու ասաց:

— Դուք գիտե՞ք, որ անիծյալ տան վերին հարկը վարձել են,

— Գիտեմ: Ովքե՞ր են վարձողները:

— Զեմ կարող ասել: Կոշկակարի կինը զարմացած է: Նա ասում է, որ երբ իր ամուսինը այդ բարձրահասակ մարդուն հայտնել է, թե տունն անիծված է, նա ասել է. «Ինձ էլ իսկ և իսկ մի այդպիսի կացարան է հարկավոր»: Եվ իսկույն վարձել է, առանց գինը սակարեկելու:

— Տարօրինակ է, չէ՞—. Հարցրի ես:

— Այո, շատ տարօրինակ է:

— Զե՞ր կարող, արդյոք, իմանալ, թե ով է այդ բարձրահասակ տղամարդը:

— Կոշկակարի կինը, երկի, շուտով կտեղեկանա ու ինձ էլ կասեի նա ինքն էլ շատ հետաքրքրված է:

Սպասավորը բերեց արսենտը: Բժիշկը մի քանի վայրկյան զբաղվեց նրա պատրաստությամբ և, մի փոքր խմելով, ասաց.

— Այժմ սկսվում է իմ պատմվածքը: Բայց թերևս դու արդեն իմ հաւաքարանից ձանձրացել ես:

— Օօ՛, ոչ, ընդհակառակը, ես պատրաստ եմ լսել քեզ թեկուզ մինչև կեսիշերը, — գոչեցի ես ամենայն անկեղծությամբ, որովհետև իրավ որ նրա պատմվածքն ինձ հետաքրքրել էր:

— Դրուրին չէ ինձ համար պատմել այդ բոլորը, բայց քանի որ սկըսել եմ, պիտի ավարտեմ: Կաշխատեմ շերկարացնել: Այդպես, որիմն, մեռյալ բնակարանը նորեն մեռավ, մի պահ աշքերը բացելուց հետո: Ամբողջ մի շաբաթ նայում էի փակ լուսամուտներին, սպասելով, որ ահազահա պիտի բացվէ մեկնումնեկը նրանցից: Ոչ մի շարժում, ոչ մի նշան: Կարծես այդ բարձրահասակ տղամարդը, այդ սեազգեստ կինը, այդ ժամանակ վերջապես այդ սայլերն ու կաչկարասին օգերեսով էին, որ մի վայրկյան հայտնվեցին և շքացան անհետք: Կարծես քահանայի անհծըռ գլորեց նրանց անդունդը:

Վերջապես մի օր, առավոտյան մոտ տասը ժամին, երբ ես հագնվում էի տնից դուրս գալու դիմացի դոները բացվեցին և, փողոց ելավ բարձրահասակ տղամարդը: Նա նայեց լուսամուտներին և, ըստ երկությին,

գոհ մնաց, որ նրանք փակ են: Հետո դարձյալ նույն գննող հայացքը ձգեց աշ ու ձախ և համբ քայլերով գնաց շփիտեմ ուր:

Առաջին անգամն էր նա մի շաբաթվա ընթացքում տնից դուրս գալիս: Գոնք ես առաջին անգամն էի նրան տեսնում:

Նույն վայրկյանին, երբ ես ուզում էի սենյակից դուրս գալ, հանկարծ լուսամուտներից մեկի փեղկերը բացվեցին, և այնտեղ հայտնվեց մի երիտասարդ կին սկ զգեստով, կրծքի վրա մի խոշոր դեղին վարդ: Զեռը հենելով փեղկերից մեկի եղրին, նա ձգեց յուր հայացքը դեպի փողոց և մնաց անշարժ: Ծո ակամա ցնցվեցի, նայելով այդ կնոջը, և մնացի բեկոված իմ տեղում: Միջահասակ էր նա, նազելի կազմվածքով: Նրա մոտի մազերը թաճճը խուրձերով արձակված էին կիսով չափ բաց ուսերի վրա: Մի բարակ մանիշակագույն ժապավեն հարդարում էր այդ մազերը բարձր ճակատից վեր: Մի ուրիշ սկագույն ժապավեն զրկել էր նրա կարապյա սպիտակ պարանոցը: Նրա բաց գույնի խոշոր աշքերը նուրբ ունաքերի տակից նայում էին դեպի անորոշ տարածություն: Նայում էին անշարժ, անթարթ, անկիրք՝ որպես արձան: Տարօրինակ էր այն աշքերի փայլը: Թվում էր, որ երբեք ինչ-որ սարսափելի տեսիլ ահ է ազգել նրանց բիբերի վրա և այդ ահը այն ժամանակից դրոշմվել է այնտեղ առմիշտ, ինչպես լույսը՝ լուսանկարչական ապակու վրա:

Սքանչելի էր լուսամուտի շրջանակում այդ պատկերը ինձ համար, և այսօր ես կարող եմ նրան համեմատել միայն Մոռփլոյի ստեղծագործության հետ: Ես ուրախ էի, որ կինն ինձ չի նկատում և կարող եմ անարգել հիանալ նրանով, ինչպես գեղարվեստական մի անզուգական դրծով: Բայց, ալվաղ, տեսարանն երկար չտեսեց: Կինը համբ քայլերով հեռացավ լուսամուտից, ինչ-որ կանացի ձեռքեր փափեցին թե՛ ապակյա և թե փայտյա փեղկերը: Անիծյալ տումը, որ պիտի օրհնվեր այդ վայրկյանից, նորին կուրացար:

Տեսարանը կրկնվեց և հետեւալ, և երրորդ, և չորրորդ օրը, գրեթե նույն ժամին և միշտ բարձրահասակ տղաժարդը տնից դուրս գալուց հետու եվ ոչ մի անգամ այդ կինը չնայեց իմ կողմը: Նրա ծովի նման ընդարձակ հայացքը միշտ ուղղված էր դեպի անորոշ տարածություն: Թվում էր, որ նրա մտքերը հեռու են, շատ հեռու ոչ միայն շրջակալիքից, այլև այս աշխարհից:

Այդ պահին արգեն ես զրկվեցի հանգստությունից, քնից, ախորժակից: Ես կորցրի իմ վաղ երիտասարդական զգարթությունը, մոռացա իմ գրքերը, համալսարանը, ընկերներիս, ծնողներիս անգամ, ամենքին ու ամեն ինչ:

Միակ առարկան իմ խոհերի ու երազների դարձավ այդ խորհրդավոր էակը: Անկողնից վեր կենալով ես առավտոնները վազում էի գեպի լուսամուտ, նստում այնտեղ ժամանակից շատ առաջ և հայացքը ձգում անիծյալ տան լուսամուտներին: Անիծյալ Ո՛չ, այլևս ինձ համար նա անիծյալ չէր, այլևս ես էի, որ անիծում էի նրա անիծողին:

Մի քանի օր լուսամուտը շրացվեց: Ես տանջվում էի կատարելապես Ինչո՞ւ, ինչ իրավունքով՝ չէի մտածում: Գլուխս չէր գործում: Զգում էի միամն, որ իմ վարդունքը տղայական է, անմիտ, անհաշիվ, որ ծիծաղելի է այդպես հանկարծակի հափշակվել մի էակով, որի վայրկենական հայացքին չի արժանացել տակավին և որի ձախնի մի հնչունն անդամ չէի լսել: Ես նմանվում էի այն մողեռանգ հավատացյալին, որի հոգեկան աշքերի առջև մի վայրկյան բաց էին արել վարագուրի ծայրը, ցույց տրվել դրախտը և իսկուն վարագուրն իշեցրել: Նա տանջվում է և կատաղում, առանց մտածելու, արժանի՞ էր, արդյոք, այդ գրախտը վայելելու:

Սքանչելի պատկերը դարձել էր ինձ համար անխուսափելի ու անխորտակելի ուրվական, որ հալածում էր ինձ ցերեկն արթուն, գիշերը՝ երազում: Թվում էր ինձ, որ ես ընկել եմ մի սոկե օղակի մեջ և զգում էի, որ այդ օղակն օր-օրի և ժամ-ժամի վրա սեղմվում է ավելի ու ավելի և սեղմում կոկորդս ավելի ու ավելի:

Բժիշկը խմեց երկրորդ բաժակի և վերջին կաթիլն ու շարունակեց.

— Մարդու նախազգացումներն երբեմն այլպես ճշարուն իրականանում են, որ կամա-ակամա ուզում ես հավատալ, թէ կա մի զաղունի ուժ, որ ղեկավարում է մեր ճակատագիրը: Մի առաջոտ վլացվելոց հետո, երբ երեսս սրբում էի, հանկարծ օդի մեջ մի ակնթարթ նկարվեց այդ կինը, ճիշտ այնպիս, ինչպես էրկանիր վրա մի պատկեր: Ես զգացի, որ իսկույննեթ նա պիտի երևա լուսամուտի մեջ և այս անդամ պիտի նայէ ինձ, շտապով հագնվեցի, նստեցի լուսամուտիս քով, առջևս զնելով մի գիրք, ինչպես անում էի միշտ: Ես չէի տեսել բարձրահասակ տղամարդի դուրս գնալը, բայց և այնպիս համոզված էի, որ խորհրդավոր էակը պիտի անմիջապես երևա: Եվ իրավ, նա երևաց դարձյալ նույն հագուստով, դարձյալ զեղին վարդը կրծքի վրա: Այս անդամ նա վերցրեց մի աթոռ, նստեց, աշ արմունկը գրեց լուսամուտի հատակի վրա, գուլոր հենեց ձեռի վրա և նույն անշարժ հայացքը հառեց հեռու: Ի՞նչ էր կորցրել նա այնտեղ կամ ի՞նչ էր փնտրում: Թվում էր շատ բան, թվում էր և ոչինչ, այնքան պարզ էր նրա հայացքը և այնքան, միւնույն ժամանակ, խոր:

Ես այլևս չէի աշխատում որսալ նրա հայացքը, նա ինքը պիտի նա-

յեր ինձ: Ես այն ինքնագոհներից չէի, որոնք այնքան մեծ համարում ունեին իրենց մասին, որ երևակայում են, թե ոչ մի կին չի կարող իրենց մոտով անցնել անտարբեր: Բայց անքան էլ տկար չէի, որ ինձ համարեի ուշություն: Ես հավակնություն չունեի արժանանալ այդ կնոջ լուրջ ուշագրությանը: Արդին նա այնքան բարձր էր իմ աշխում, այնքան հեռու ինձնից, որքան մի պայծառ աստղ՝ մի շնչին մոլորակից: Նայում էի նրան և սքանչանում նրա սքանչելի գեղեցկությամբ: Եվ օրհնում էի մտքում բնության հանճարը, որ կարողացել էր ստեղծագործել մի այդպիսի հրաշլիք իմ անիմաստ, խելառ տվյալանքների համար:

Բայց ո՞ւմն է, արդյոք, այդ ստեղծագործությունը, ո՞վ է վայելում այս աստվածային գեղեցկությունը: Մի՞թե այդ բարձրահասակ տղամարդը ժանտ կերպարանքով: Եթե այդպիս է, եթե նրանք ամուսիններ են, թող անիծվե կյանքը, որ տալիս է այդ տեսակ անարդարություններ...

Երջանիկ և սարսափելի վայրկյան... նա նայեց ինձ... ժպտաց... բայց ինչ տարօրինակ, ինչ անհասկանալի ու անզուշակելի ժպիտ: Նա ինձ ուրախացրեց և վախեցրեց: Դա մի սքանչելի ժպիտ էր, բայց անիմաստ: Փայլեցին նրա կապտագույն աշքերը, բայց պաղ, ինչպես փիրուզներ: Ես ցնցվեցի: Թվաց ինձ, որ այդ կապարյա անշարժ հայացքը թափանցեց ամբողջ էությունս, ինչպես հանկարծակի փշած մի սառն ու սուր հովի բայց մի սառնություն էր դա, որ այդեց հոգիս: Ես այլալլվեցի, չկարողաց իմանալ՝ հարկավո՞ր է ժպտին ժպիտով պատասխանել, թե՞ո ոչ: Գլուխը թեքեցի կրծքիս ու ձևացրի, թե կարում եմ առջևս դրած գիրքը: Սիրտըս ուժգին որոփում էր, ես դողում էի ինչպես մի վեհերոտ մանուկ, որին բռնել էին գողության միջոցին: Այլևս ուժ չունեի այն կողմը նայելու Խոկ եղբ նայեցի, նա արդեն չքացել էր, թեև լուսամուտը դեռ բաց էր...

Իմ պատանեկան անարատ երեակայությունն արդեն բարձրացրել էր այդ խորհրդագոր էակին եթերը, և բոլոր խոհերը; բոլոր զգացումները թուղում էին դեպի նա: Ես ոչինչ չէի նշամարում շուրջս, ոչինչ չէի զգում, ո՞չ վշտերը մարդկային, ո՞չ ուրախությունները: Աշխարհը և համարյա տիեզերքն ինձ համար ամփոփված էին նրա մեջ: Նրանով էի միայն ապրում, նրանով շնչում: Չե՛ ուզում հանդիպել ոչ ժանոթների և ոչ նույնիսկ ընկերների: Ես մի ագա՞ էի, որ հանկարծակի դտել էր մի գաղտնի գանձ և դողում էի նրա մասին: Նա ինքը չի կարող այդ գանձը վերցնել, բայց չի էլ ուզում, որ մի ուրիշը գիտենա նրա տեղը, գախենալով միգուցե հափշտակեն նրան: Խոսել նրա մասին որևէ մեկի հետ հս համարում էի և հանցանք, և տիսմարություն: Հանցանք, որովհետև մարդիկ, մանա-

վանդ իմ մտերիմ ընկերները, կարող էին այս կամ այն ակնարկով վիրավորել իմ սրբությունը: Տիմարություն, որովհետև ես կարող էի գտնուալ ծաղրելի հենց միայն այն պարզ պատճառով, որ խելագարի պես սիրահարվել էի մի կնոջ վրա, որի ով և ինչ լինելը տակավին չգիտեի և որի հետ մի բառ անգամ չէի փոխանակել:

Եվ այդպես, ինքս իմ մեջ ամփոփված տառապում էի լուս, անտերտունչ և անհաշիվ:

— Ի՞նչ է պատահել ձեղ, որ միշտ նստած եք տանը,— հարցնում էր տանտիրուհիս, այդ բարի կինը:

— Ջրազված եմ, դասեր եմ պատրաստում, ասում են համալսարանը շուտով բացվելու է,— ստում էի անամոթաբար ես, որ չէի էլ մտածում ուսման մասին:

Նույն պատասխանն էի տալիս և իմ ընկերներին ու ծանոթներին, երբ պատահում էր, որ սենյակից դուրս էի գալիս որևէ ստիպողական գործուլ:

III

Իսկ նա ամեն օր երեսում էր լուսամուտի առջև սկզբանով և միշտ մի դեղին վարդ կրծքի վրա:

Մի անգամ ես շկարողացա զսպել ինձ և բարենցի նրան գլխի թեթև շարժումով, երբ նրա հայացքին հանդիպեցի: Ոչ մի պատասխան և ոչ մի նշան գո՞ւնակության կամ դժկամության այդ գողոսուկրի գույն ունեցող դեմքի վրա, այդ երեսագույն աշքերի մեջ: Նա միայն նայում էր ինձ իր անշարժ, պաղ հայացքով և, կարծես, չէր տեսնում:

Ես զջացի հանդզնությանս համար, նախատելով ինքս ինձ, և ամոթաբար հեռացա լուսամուտից: Միևնույն ժամանակ զգացի ինձ շափազանց վիրավորված այնպես, ինչպես կարող էր վիրավորվել իմ հասակի մի պատանի մի կնոջ անուշադրությունից:

Նստած էի զրասեղանիս քով և աշխատում էի զրադվել որևէ բանով, դրելով, կարդալով, իմ տիսմար զգացումները գեթ մի քանի վայրկյան մոռնանալու համար: Ես չէի կարողանում: Գրիլս չէր շարժմում գրելու, բառերը կարդալիս խառնվում էին իրարու՝ մրցյաների պես:

Հանկարծ լսեցի դաշնամուրի ձայն: Նայեցի դեմուզեմ: Նա շկար լուսամուտի մոտ: Պարզ է, որ նվազողը նա է, եթեր շաբաթվա ընթացքում առաջին անգամ: Ի՞նչ էր նվազում՝ չգիտեմ: Ամբողջ եղանակը բաղկացած էր երեք անփոփոխ նոտաներից, որ կրկնվում էին մի անգամ բարձր, մյուս անգամ ցածր: Հիվանդութ, ներվային, սիրտ մորմորող նոտաներ,

որ այնուհետև կրկնվում էին ամեն օր մի քանի անգամ։ Այսօր էլ հիշում
էմ այդ նոտաները և միշտ պիտի հշեմ, մինչև մահ։ Իմ մեջ հզացավ մի
շար կասկած, որ վայրկենաբար տակնովրա արավ իմ էռթյունը։ Այդպես
շեն նվազում առողջ մարդիկ՝ լինեն վարպետներ, թե աշակերտներ։ Այդ
երեք անփոփոխ նոտաների մեջ կա ինչ-որ անձկություն, անբացարելիք
անըմբռնելի թախիծ հիվանդ հոգու։

Մի օր տանտիրուհիս, եռող սամովարը դնելով սեղանիս վրա, կանգ
առավ և, ձեռքերը կրծքի վրա խաչած միացնելով, նայեց ինձ մայրա-
կան կշտամբանքով։

— Ինչո՞ւ եք այդպես նայում ինձ, Պոլինա Նիկոլաևնա, — հարցրի Ետ
ժապալով։ — Մի՞թե փոխվել եմ։

— Շատ, դուք անձնանաշելի եք դարձել։ Մենակ ես չեմ ասողը, իմ
ընկերներն էլ ու հարևաններն էլ նկատել են։

— Բայց ես առողջ եմ, Պոլինա Նիկոլաևնա, բոլորովին առողջ, Կա-
մենաք, ես մի ձեռով ձեզ կրաքրացնեմ։

Եվ, իրավ, ես պատրաստ էի նրան գրկել ու բարձրացնել, այնքան
համակրելի էր, այնքան մայրական այդ կնոջ հայացքը։

— Տա ասուկած, որ ես սիալվեմ, — ասաց նա հառաշելով, — պահ-
պանեցեք ձեղ ձնողների համար։

Որպեսզի խոսակցության նյութը փոխեմ, հարցրի։

— Ի՞նչ նորություն կա մեր հարևանության մեջ։

— Նորությունն այն է, որ կոշկակարի իինը գավթապահից իմացել
է ովքեր են մեր դեմուդեմի հարևանները։

Ինձ էլ այդ էր հարկավոր։

— Այսու, — արտասանեցի ես, ձեանալով անտարեր։

— Այսու։

— Ովքե՞ր են։

— Մարդ ու կին, ամուսիններ։

— Մի՞թե, — գոշեցի ես, այլևս չկարողանալով զսպել թե՛ հետաքր-
քըրությունս և թե՛ դառնությունս։

— Այսու, և զավախներ չունին։

— Հետո՞ւ։

— Նրանք տեղացիներ չեն։ Եկել են Ղրիմի կողմերից,

— Ինչպե՞ս է նրանց աղքանունը։

— Սպասեք միտս բիրեմ։ Աղովսկի, այսու, այսու Աղովսկի...

— Ուրեմն, ուռւնե՞ր են։

— Ո՞չ, հայեր են։ Գավթապահն ասում է, նրանց անցագրում գրած
է «Հայ լուսավորչականներ»։

— Ասում եք նո՞ր են եկել թիֆլիս։

— Մի քանի ամիս է, Առաջ իշեանել են հյուրանոցում, հետո բնա-
կարան են վարձել, Կաջկարասին էլ այստեղ են գնել։

— Ե՞՞չ, ուրիշ ի՞նչ գիտեք, — հարցրի ես կեղծ հեգնանքով, իբր թե
այրիի հաղորդածներն ինձ համար շատ էլ հետաքրքրական չեն։

— Առայժմ ոչինչ։ Բայց դուք ուշադրություն դարձրեք ձեր վրա այդ-
պես չի կարելի, սիրոս ցավում է ձեր ծնողների համար։

— Ծնորհակալ եմ, Պոլինա Նիկոլաևնա, անկեղծ շնորհակալ եմ։
Բայց մի՛ հոգաք իմ մասին։ Ես երկաթյա առողջություն ունիմ։

Արդարն, տկար էր հոգիս, իսկ մարմնով ես զգում էի ինձ բոլորովան
առողջ։

Այրին, գլուխը խորհրդավոր երերելով, հեռացավ։

Պարզ էր ինձ համար, որ նա իբրև ոչ հիմար կին գուշակում էր իմ
հոգեկան դրությունը, զիտեր ում համար և ինչու եմ նստում տանը, և ով
է իմ փոփոխության պատճառը։ Պարզ էր նաև, որ դիտմամբ շնչարեց, թե
սկազբեստ կինն ամուսնացած է։

Ես չեմ նկարագրի, թե այդ լուրն ինչ ապավորություն գործեց ինձ
վրա, Կասեմ միայն, որ դա ինձ համար իսկ որ հարված էր, Մի հար-
ված, որ, սակայն չսիափեցրեց ինձ, այլ բնդշակառակը ավելի սաստ-
կացրեց իմ ներքին հորդը։ Այդ վայրկանից ես ատեցի բարձրահասակ
տղամարդին։ Ատեցի իմ պատաննեան հոգու ամբողջ թափուլ ինչո՞ւ, ո՞ր
իրավունքով, ո՞վ եմ ես. այս մասին ես չի մատածում։ Թող այդ մարդը
լինի առաքինիների մեջ ամենաառաքինին, արժանաւորեներից արժանավո-
րագույնը, նա այդ կնոջ ամուսինն էր, ուրեմն և սխելիմ հակառակորդս,
որին պատրաստ էի այդ պահին ոչնչացնել առանց երկար մտածելու Ան-
շնչար այդ մարդը մի ժանտ բռնակալ է, որ գերել է հեղեցիներից գեղեց-
կագույնին և պահում է նրան իր իշխանության ներքո ըստեն շզթայ-
կապ։ Անշուշտ ասիական խանոցից կուրացած մի հսամու է, որ տանջում
է նրան համուն իր հսի։ Այլապես ի՞նչ են նշանակում այդ մշտապես փակ
լուսամուտները, որոնցից միայն մեկն է բացվում, այն էլ օրվա մեջ ըն-
դամենը մի քանի ժամ, այն էլ, երբ բռնակալը տանը չէ։ Այլապես ի՞նչ է
նշանակում, որ այդ կինն երբեք տնից գորս չի գալիս և օր-օրի վրա, իմ
աշքերի առջև դժգումանում է ու նիշարում և օր-օրի վրա խոշորանում են
նրա գեղեցիկ աշքերի բիբերը, և լայնանում նրանց տակերի կապույտ-
ները։ Ուրիշ ինչպե՞ս թարգմանել այդ երեք անփոփոխ նոտաները, որ

այժմ հնչում են ամեն օր այնքան միապաղաղ, այնքան վշտահար! Աստվածիմ է կարող եմ ցնորվել այդ տարօրինակ հնչումներից: Նրանք գալիս են մի քայլաված հոգու խորքերից և զարկում են իմ օր-օրի վրա նրբացող ու զգայնացող ներքերին ասեղների պես: Այս, գիտե՞՛ արդյոք այդ կինը, որ եթե ոչինչ էլ վիներ, միայն այդ խելագար հնչումները բավական են ինձ տանջելու համար: Գիտե՞՞, որ ես երեմն պատրաստ եմ դուրս բերել գլուխս լուսամուտից և գոռալ: «բավական է, անողոք էակ, բավական է, ես չեմ կարող լսել այդ խելար հնչումները»:

Բժիշկը դարձյալ կանգ առավ, ձեռի ներվային շարժումով տրորեց թանձր կարճ խուզած ալեխառը մազերը և շրթունքները սեղմեց ատամներով՝ իր հուզմունքը չափավորելու համար: Այդ պահին նա ամբողջովին ձուզած էր իր անցլալի հետ: Նա վառեց մի նոր ծխախոտ և շարունակեց:

— Սուավոտ էր Գրասեղանիս քով նստած նամակ էր գրում ծնողներիս: Բավական ժամանակ էր մոռացել էի խեղճերին: Գրում էի, բայց ուշ ու միտք ամիծյալ տան կողմն էր: Սպասում էի անհամբեր բարձրահասակ մարդու դուրս գալուն: Քրոնոմետրի ճշտությամբ նա ամեն օր դուրս էր գալիս տնից առավոտյան տասը ժամին և վերադառնում էր երեք ժամին: Ահա այդ ժամանակամիջոցներին էր, որ լուսամուտը բացվում էր, և այնտեղ երևում էր նրա սեազգեստ կինը:

Այդ օրն էլ տղամարդը դուրս եկավ ճիշտ իր ժամանակին, բայց կինը շերեաց մի ամբողջ ժամ, շերեաց մինչև կեսօր: Ես սկսեցի անհանգըստանալ: Միկուցի նա հիվանդ է կամ այդ բռնակալը խել է նրանից ալդ չնշին աղատությունն էլ: Մի՞թե ես այլևս չպիտի տեսնեմ նրան: Այդ անկարելի է, ես կցնորդեմ: Եվ, իրավ, եթե մեկն ինձ տեսներ գողտուկ, թե ինչպես հուզված, այլայլված ետ ու առաջ եմ քայլում իմ փոքրիկ սենյակում վանդակ ձգված վագոնի պես, անշուշտ, ինձ համարեր խելագար, Կարծես ես արդեն տեսել էի այդ կնոջը և այժմ կատաղում էի, որ նրան խլում են ինձնից:

Վերջապես, սենյակս թվաց ինձ նեղի: Ես խեղդվում էի օդի պակասությունից: Վճռեցի դուրս գալ մանավանդ որ ծնողներիս գրած նամակս պիտի ձգեի փոստարկը: Բայց հազիվ դուրս էի եկել փողոց, հանկարծ նվիրական լուսամուտը բացվեց, և տիկինը երևաց այնտեղ մի ծրար ձեռում: Ես գդակս բնականարար վերցրի և բարենցի նրան, դրաձյալ զգիտեմ ինչ իրավունքով: Այս անգամ նա գլուխը թեթեակի շարժեց և ով զարմանք, ծրարը մեկնեց դեպի ինձ: Մինչ ես, անասելի շփոթված, զգիտեմ ինչ անել, նա ծրարը ձգեց փողոց և ինքն անհետացավ:

Ես, աշ ու ձախ նայելով, գողովի վազեցի և ծրարը վերցրի Բարե-

բախտաբար, ոչ ոք այդ շնկատեց, Պարզ էր ինձ համար, որ ծրագրն ինձ է ուղղված: Բայց նայեցի նրան, անունս չկար վրան: Ետապով վերագրած սենյակս, պատուցի ծրարը: Սիրտս ուժգին բարխում էր, ձեռքերս դղողում էին ուրախությունից և անհայտությունից:

Ընդամենը մի էջից բաղկացած մի գրություն էր դա՝ ուսւերեն: Նա ինձ չէր ուղղված, նա ոչ ոքի չէր ուղղված: Կարդացի, ոչինչ չհասկացաւ, նախ դա մի տարօրինակ ձեռագիր էր, տառերն անհավասար, տողերն անկանոն, մի բառ փոքրիկ, հազիվ նկատելի տառերով, մյուսը գլխատառերով:

Սպագայում, երբ ես իբրև բժիշկ պարապում էի Մոսկվայի կլինիկայում, այնտեղ, հոգեկան հիվանդների բաժնում շատ եմ տեսել համանման ձեռագիրներ բոլորովին գրագետ և կրթված մարդկանց ձեռքերով գրված:

Երեք տող միայն պարզ էին գրված և, ըստ երևութին, ունեին իմաստ: Այսօր էլ հիշում եմ բառ առ բառ այդ տողերը. «Էկուղեմարը սիրեց Ալինային, Ալինան ասաց չի կարելի: Գազանը տեսավ, կատաղեց, սպանեց, սպանեց»:

Ի՞նչ էին նշանակում այդ տողերը. Հարկավ չհասկացաւ: Բայց այլևս ինձ համար պարզ էր մի բան. այդ խորհրդավոր կինը հոգեկես հիվանդ է, և ինքս ինձ նախատեցի, որ նոր եմ միայն գուշակում: Այս, այդ պակեյացը խոշոր աշքերի, այդ անիմաստ ժպիտները, այդ փակ լուսամուտները, այդ թախծակ միապաղաղ կոկնվող երեք նոտաները, այդ բարձրահասակ տղամարդի մոայլությունը. մի՞թե այդքանը բավական չէր:

Ես նամակը թաքցրի գրասեղանիս մեջ և ամեն օր նայում էի նրան: Այսօր էլ ես նրան պահում եմ, իբրև հիշատակ իմ խելառ տվայտանք. ների, իմ անքուն գիշերների, անհուն արցունքների: Ո՞չ, իբրև մի սրբություն-սրբոց, որովհետեւ այդպիսի կրակու սեր այլևս չպիտի կրկնվեր իմ վյանըրում: Հարկավ, եթե իմ բանականությունը լիներ արթուն, եթե ես ունենայի մտածելու և վերլուծելու ուժ, այդ նամակը կարդալուց հետո իսկույն կաթափեկի իմ ցնորքներից և կաշխատեկի հանգցնել կրծքիս տակ օր-օրի վրա ավելի ու ավելի բողբոքվող հուրբ: Զէ՞ որ ինքնասպանություն է երազել մի կնոջ մասին, որի գոյությունը երազ է: Մի կնոջ, որ ընության դաժան ձեռքով պոկվել է երկրից և այրվում է ցնորքների բուլում: Բայց, զարմանալի բան, այդ պահից ես այդ կնոջը սիրեցի կրկնակի սիրով: Դուցե՞՞ զա մի գեռահաս հոգու կարեկցություն էր դեպի մի թշվառ: Զգիտեմ:

Հետևյալ օրը տանտիրուհիս եկավ որոշյալ ժամին սենյակս կարդի բրեխու։ Ես անքությունից այնքան թուլ էի, որ խնդրեցի նրան թողնել ինձ այդ օրը հանգստ։ Նա նայեց ինձ տիսուր հայացքով ու ասաց։

— Գիտեմ, որ տկար եք, բայց հետաքրքրական լուր ունեմ ձեզ հայտնելու։

— Ի՞նչ է պատահել։

— Մեր դեմուղեմի կինը ցնորված է։

— Մի՞թե, — արտասանեցի ես, իբր թե անտարբեր։

— Այո՞ւ մեզ եք պատմեմ ինչիցն է ցնորվել։ Կոշկակարի կինն ամեն բան իմացել է Ազովսկիների աղախնից։

— Պատմեցեք, — նույն անտարբերությամբ ասացի ես։

Տանտիրուհիս նստեց գրասեղանիս բով և յուր հագուստի թևերը ցած բրեց, որ ծածկե աշխատանքից կոշտացած և կրակից կարմրած բազուկները։

Եվ պատմեց։

IV

Ութ տարի է, որ Ազովսկիներն ամուսնացած են։ Մարդու անունն է Սրափին, կնոջ անունը՝ Ալինա։ Մարդը հարուստ կալվածատեր է, ունի չորից ժառանգած մի քանի հազար գեսատին վարելահողեր թեսարարությի նահանգում։

Ամուսնանալու ժամանակ նա եղել է դրադունյաց զնդի սպա։ Ալինան հետևակ զորքի մի շքավոր փոխնդապետի առջիկ է, շատ լավ կրթված։ Սրափինը ամուսնացել էր նրա հետ, հափշտակված նրա աննման գեղեցկությունով։ Իսկ Ալինան տվել է իր համաձայնությունը, զիշանելով ծնողներին, որոնք փափառել են անպատճառ հարուստ փեսա ունենալ։ Նրանք ուղեցել են, որ իրենց միակ գուտարք լավ ապրուստ ունենա, անձամբ զգալով, թե ինչ ասել է շքավորություն։ Ալինան շի սիրել Սրափինին։ Չի սիրել և ուրիշ ոչ ոք։

Լավ թե զատ, Ազովսկիները չորս տարի ապրել են հաշտ, հանդիսաւ ու անգրդով։ Ալինան հետզհետե ընտելացել է շիրած ամուսնու կենակցությանը, նիշտ այնպես, ինչպես ընտելանում է հարյուրից իննսունինը աշխարհի բոլոր կանանց։ Մարդիկ, որ միշտ ուրիշների կյանքի մասին աշքերով են դատում, կարծել են, թե չկա նրանցից ավելի երշանիկ զույգ։ Եվ շատ կանացք նախանձել են Ալինային, ու շատ տղամարդիկ նախանձել են Սրափինին։ Չորս տարվա ընթացքում նրանք ունեցել են առաջին

տարին իսկ ծնված մի երեխա։ Նա մեռել է երկուսուկես տարեկան հասակում՝ ուղեղի բարերպումից։ Ծնողների վիշտն ավելի ամրացրել է ամուսնական կապը, բայց Ալինան դարձյալ չի սիրել ամուսնուն իսկ Սրափինը քանի ցնացել այնքան ու այնքան ավելի է սիրել Ալինային։ Երեխայի մահն է աղոթել, թե ինչ, Ալինան սկսել է ձանձրանալ կյանքից։ Սրափահարված ամուսինն ամեն կերպ աշխատել է փարատել նրա թախիծը, բայց զուր Ռ' Հանապարհորդությունները եվրոպայում, ո՛չ թանկարժեք համաշխարհային կուրորտները, ո՛չ թատրոն, ո՛չ երաժշտություն, չքեզ զգեստներ, երեկութներ, պարահանդեսներ, ոչինչ, ոչինչ չի օգնել։ Ալինան դարձել է օր-օրի վրա ավելի ու ավելի թախծոտ, մոայլ Շնողների հանկարծակի մահը մեկը մյուսից երկու ամիս չանցած՝ կրկնապատկել է նրա վիշտը։

Եվ ահա այդ ժամանակ, այսինքն՝ մի աշնան սկզբին, Փետերբուրգից Դրիմ է գալիս Սրափինի նախկին բարեկամներից մեկի որդին։ Քսանուհին տարեկան մի երիտասարդ՝ զանգուր, շիկագոյն մազերով, ուրախ ովարթի։ Ալցելում է Ազովսկիներին, ծանոթանում է Ալինայի հետ։ Մի քանի անգամ զրուսնում է նրա հետ և ահա նա հափշտակված է։ Հափշտակվո՞ւմ է արդյոք Ալինան և՛ լրջորեն՝ մինչև այսօր պարզված չէ։ Բայց նրա թախիծը մեղմանում է։ Նա հաշտվում է կյանքի հետո նա նորին մերձենում է աշխարհին։

Սրափինը նկատում է այս Ակզեռում ուրախանում է, տեսնելով կնոջ վերակենդանանալը։ Բայց հետո սկսում է կասկածել ու խանցել և հետեւում է Ալինային։ Մի օր նա չի կարողանում իրեն զսպել և իր բարեկամի որդուն ընդունում է ու սիրալիր։ Ալինան նրան հանդիմանում է, ասելով, որ իր համար ոչ մի քան ալնքան ատելի չէ, որքան կոպտությունը։ Այս հանդիմանությունն ավելի է զրգում Սրափինի կասկածներն ու նա ասում է։

— Այո՞ւ, ես վաղուց եմ նկատել, որ դու անտարբեր չես զեպի այդ երիտասարդը։

Ալինան ապնվությամբ և համարձակ պատասխանում է։

— Չեմ թաքցնիլ, Սպիրիդոնովն ինձ դուր է գալիս, բայց ես երբեք չեմ մռանալ, որ քո ամուսինն եմ։

Սրափինը մի պահ հավատում է նրան, մինչև անգամ ներումն է խնդրում Ալինայից։ Բայց միայն մի պահու Շուտով չար կասկածները պաշարում են նրան այնպես, որ նա սկսում է կորցնել իր զգացումների ու մտքի հալաւարակշությունը։

Վերջապես, մի օր տուն վերադառնալով, նա տեսնում է, որ Ալինան

դաշնամուրի բով նստած նվագում է, իսկ Սպիրիդոնովը երգում է: Եթև կուտն էլ այնքան հափշտակված են լինում, որ չեն նկատում նրա սալոն մտնելը: Նա կատաղում է, բայց կարողանում է զսպել իրեն: Միայն առանց հյուրին բարեկու, լուս անցնում է յուր առանձնասենյակը:

Ալինան շարունակում է երգել, կամենալով թե՛ հյուրից թաքցնել ամուսնու խանդուությունը և թե՛ ամուսնուն ցուց տալ, որ չկա իր արածի մեջ ոչ մի հանցանք, որ դա մի անմեղ զվարճություն է երկու երիտասարդ էակների համար, որ պաշտում են երաժշտությունն ու երգը:

Բայց ամուսինն այլ կերպ է հասկանում Ալինայի վարմումքը: Նա կարծում է, որ դա մի հանդուգն արհամարհանք է գեղի իր համեմատական ծերությունը: Արհամարհանք քսանուերեք տարեկան մի կնոջ դեպի քառասուներկու տարեկան տղամարդը: Արհամարհանք մի երրորդ անձնավորության, այն էլ մի երիտասարդի ներկայությամբ և գուցե նրա պատճառով իսկ:

Նա դուրս է գալիս իր առանձնասենյակից գրգուած ու գունատ: Նա մի կարողանում յուր խանդը զսպել և հուզված ձայնով ասում է.

— Ալինա, բավական է:

Ալինան ժպտում է, մի փոքր ևս նվագում է և հետո միայն ծածկում է զաշնամուրը հանդիսաւ, անվրդով: Իսկ երիտասարդը նույնպես ժպտում է: Այդ ժպիտը նրա թարմ, գեղեցիկ, գրեթե պատանեկան անմազ երեսի վրա նետի պես ցցվում է Սրափիոնի գրգուած սրտի մեջ: Բորբոքում է նրա խանդը: Նա ասում է անորոշ.

— Ես ուրախ եմ և ցավում եմ, որ դուք իմ բարեկամի որդին եք:

— Ինչո՞ւ համար:

— Հենց այնպես:

— Բայց ես ձեզ հասկանում եմ, — ասում է երիտասարդը, — շատ բարի, ես կկատարեմ ձեր սրտի զաղոնի ցանկությունը:

Եվ, զառնալով Ալինային, ավելացնում է.

— Տիկին, ներեցեք, ես այլևս չեմ կարող անհանգստացնել ձեր հարգելի ամուսնուն, որ իմ հոր բարեկամն է:

Եվ այդ օրից Սպիրիդոնովը դադարում է այցելել Աղովսկիներին:

Այդ բոլորը տեսնում է ու լսում Աղովսկիների աղախինը, որի խոսքերով և պատմում է ինձ տանտիրուհիս:

Սակայն Ալինան չի ընդհատում ծանոթությունը Սպիրիդոնովի հետ: Հարունակում է տեսնել զրուերում: Սրափիոնը չի բողոքում, խսուռվանել ուն, որ իրոք ինքը կոսկիտ վարվեց իր բարեկամի որդու հետ:

Ալինան ասում է.

— Քանի որ գիտեիր քո խանդու բնավորությունը՝ չպիտի ամուսնացիր:

— Ես սիրում եմ քեզ:

— Ես չեմ հավատում այն սիրույն, որ այդպիս կասկածու է:

— Լավ, հաշտվենք:

— Հաշտվիր առաջ բարեկամիդ որդու հետ, ներողություն խնդրիր, հետո:

— Այդ ես չեմ կարող անել:

— Իսկ ես չեմ կարող քո անտեղի կասկածների համար զրկել ինձ աղատությունից:

Մի օր Սրափիոնը հանդիպում է Ալինային քաղաքի մի զբոսավայրում Սպիրիդոնովի հետ, մի ծափի ստվերի տակ նստած: Նա չի կարողանում զսպել իր խանդը և կարճատե բացատրության ժամանակ վիրավորում է երիտասարդին: Սպիրիդոնովը նրան հրավիրում է մենամարտության, մյուս օրն եթե ուղարկելով Սրափիոնին երկու սպա: Բայց մենամարտությունից առաջ նա ուղարկում է մի նամակ Ալինային՝ մի փոնչ վարդերի հետ: Նա գրում է.

— Տիկին, ասում են, որ դեղին վարդը ատելության նշան է: Բայց ես միշտ գերազանցել եմ այս գույնը բոլոր գույներից: Այսօր որոշվում է իմ ճակատագիրը: Գուցե ես գնամ հավիտենականություն անդառնալի: Թող այս վարդերը լինեն իմ մաքուր սիրո վերջին նշանը: Մնացե՛ք բարով...

Նամակը փնջի հետ բերում է մի շքեղ հագնված աղախին և գաղտնի հանձնում Ալինային:

Իրիկնադեմին Սրափիոնը տուն է վերադառնում անսովոր հուզված:

Ալինան նրա գեմֆից արգեն գուշակում է կատարված զրաման: Նա ոչինչ չի ասում, նայում է լուս իր ամուսնու երեսին և անցնում իր բուդուարը: Ամբողջ գիշեր նա չի դուրս գալիս այնտեղից: Աղախինը մի քանի անգամ մտնում է նրա մոտ զանազան պատրվակներով և ամեն անգամ տեսնում է Ալինային անշարժ նստած ու աշքերը հառած դեղին վարդերի փնջին:

Այդ պահին Ալինան ընդհատում է իր բոլոր կապերն աշխարհի հետ: Օրը մինչեւ երեկո իր սենյակում փակված՝ նա ոչ մի տեղ չի գնում և ոչ ոքի չի ուղարկում ընդունել Ռշա ամոթից, այլ շշտից:

Աղախինն ասում է, որ նա մի ամիս շարունակ կրկնում էր.

— Դու սպանեցիր մի անմեղի, գու լոնեիր իրավունք ձեռք բարձրացնելու այդ խեղճ տղայի վրա: Ի՞նչ պատասխան պիտի տաս աստծուն:

— Իմ խիղճը հանգիստ է, մի պատվասեր ամուսին շէր կարող ուփիշ կերպ վարվել, — պատասխանում է ամեն անգամ Սրափիոնը:

— Ո՞ւ, ո՞ւ, քո խիղճը չի կարող հանգիստ լինել, որովհետև ես անմեղ եմ: Այդ երիտասարդի արյունը գիշեր-ցերեկ աշքերիս առջև է, ես նրա մահվան ակամա պատճառն եմ, աստված ինձ է պատժելու:

Եվ զրկվում է Ալինան քնից, հանգստությունից, ախորժակից: Եվ ատելով ամուսնուն, սկսում է ատել ամենքին: Եվ դատապարտելով ամուսնուն, դատապարտում է ինքն իրեն էլ: Գիշերները աղախինը լսում է նրա երկարատև հիսթերիկան, նրա սուր գոռոցները:

— Հեռու ինձնից, մի մոտենար, ես քո ձեռքերի վրա անմեղ արյուն եմ տեսնում:

Եվ ոչինչ չի ազդում նրա վրա, ո՞ւ բժիշկների խնամքը, ո՞ւ ամուսնու աղերսանքները, ո՞ւ խանդավառ սերը, ո՞ւ զզումը: Այո, նա զզում է գուցե անկեղծ, գուցե հավատարով Ալինայի մաքրությանը, բայց զուր: Թրօրի վրա Ալինայի հոգին քայլայվում է...

Փոքրիկ նահանգական քաղաքում եղելությունն իրարու պատմում են աղավաղված: Զհաստատված լուրերը հաղորդվում են իրեն փաստեր: Գրաբարությունը, որ գեղեցիկ կանաց անխոստափելի ուղեկիցն է, հալածում էր Ալինային դեռ մենամարտությունից շատ առաջ: Այժմ շար լեզուների բոլոր կապանքները լուծվում են, իսկ նա անտարբեր էր դեպի հասարակական կարծիքը: Նա ամփոփել է ինքն իր մեջ, նա հեռու է, շատ հեռու դրսի աշխարհից: Նրա լսելիքին չի հասնում ոչ մի ձայն այնտեղից: Դեղին վարդերի փոնչը վազուց է թառամել, բայց նա մի գեղեցիկ վազայի մեջ շարունակում է զարդարել Ալինայի զաշնամուրը: Օրը հարյուր անգամ նա մոտենում է այդ փնջին և յուր քնքուշ մատներով շոշափում է թորշումած վարդերը, որոնց տերեները մեկիկ-մեկիկ պոկվելով ընկնում են վար և անհետանում: Վերջը, մի ժամանակվա սքանչելի ծագիկներից մնում են նրանց շորացած ձողիկները: Այն ժամանակ Ալինան հրամայում է իր հավատարիմ աղախնուն, որ սիրում էր նրան լավագույն քրոջ սիրով, ամեն օր, ամեն օր գնել մի-մի դեղին վարդ: Եվ ահա այդ խորհրդավոր վարդն է, որ այսօր էլ զարդարում է Ալինայի կուրծքը:

Սրափիոնը վճռում է վերցնել Ալինային և հեռանալ անժամոթ երկըներ: Տունը հանձնում է խոհարարի հսկողությանը, իսկ աղախինը Ալինայի ցանկությամբ ուղեկցում է նրան: Նրանք գնում են նախ Մոսկվա, ապա Ելիուպա: Սակայն ոչ մի փոփոխություն Ալինայի հոգեկան կացության մեջ, ոչ մի ժամկ նրա դեմքի վրա: Բժիշկները միաձայն ասում են,

— Պարոն, ձեր ամուսնուն անդորրություն է հարկավոր: Նրա ականշներին չպիտի հասնե ոչ մի աղմուկ:

Մի քանի նշանավոր պրոֆեսորներ խորհուրդ են տալիս Ալինային տեղավորել հոգեկան հիվանդների սանատորիայում:

— Երբեք, երբեք, — ասում է Սրափիոնը, զարմանալի համառությամբ շկամենալով բաժանվել իր սիրեցյալից:

Նրանք վերադառնում են արտասահմանից, և Սրափիոնն ամեն չանք գործ է դնում տալ Ալինային անպայման հանգստություն: Եվ գրա համար նա վճռում է տեղափոխվել Թիֆլիս, որ Ազովսկիները չունեն ոչ մի ծանոթություն: Նա դեռ հոյս ունե, Ալինան կառողջանա տանը...

Այս բոլոր պատմեց ինձ տանտիրուհիս այնպես զգացված, որ կարծես ինքը Ալինայի մերձավորներից մեկն էր: Ես զգացի, որ իմ մեջ զարգանում է այնպիսի ատելություն դեպի այդ բարձրահասակ տղամարդը, որի նմանը կարելի է զգալ միայն դեպի որդեսպանը: Այլևս նա իմ աշխում մի հրեց էր, որին կործանելը ես կհամարեի բարություն և արդարություն: Ինձ համար Ալինան մի մարմնացած տանջանք էր, իսկ այդ մարդը՝ միահի նրա հեղինակը:

Ես սիրեցի Ալինային կրկնակի սիրով: Ես զգացի, որ այլևս իմ հոգին հավիտյան շաղկապված է այդ հիվանդ հոգու հետ, որ այլևս ոչ մի գերբնական զրություն չի կարող ինձ բաժանել նրանից՝ առանց իմ սրտից մի արյունաշաղախի կտոր պոկելու: Զգացի նույնպես, որ իմ զրությունը ողբերգական լինելով հանդերձ, երեխայական է ու ծիծաղելի: Ողբերգական ինձ համար, ծիծաղելի ուրիշների համար: Սիրում էր մեկին, որ իրապես գոյություն չուներ այս աշխարհում, որ մի ուրվական էր, մի ծանր երազ: Տանջվում էի մեկի համար, որ ոչ ոքի տանջանքը հասկանալ ու զգալ չէր կարող, որովհետև նա ինքն էր մարմնացած տանջանք:

Բժիշկ Ախուրյանը մի անգամ ես լոեց:

Մեր շուրջն այժմ տիրում էր համեմատական հանդարտություն: Սըրճարանը գրեթե դատարկվել էր: Հաճախորդներն անցել էին սեղանատուն: Պարիզը ձաշում էր. միակ ժամը օրվա ընթացքում, երբ խլացուցիչ աղմուկը մեղմանում է քիչ թե շատ:

Բժիշկ նաև ժամացուցին ու ասաց:

— Օ՛, արդեն ուշ է, կարծես ես շատ երկարացրի:

— Լսում եմ ձեզ ավելի մեծ հետաքրքրությամբ, — ասացի ես առանց կեղծելու:

— Ալրդեն մոտենում եմ վերջին, — արտասանեց բժիշկը և վառեց մի նոր ծխախոտ:

— Այսպես, ուրեմն,— շարժմակեց նա,— սիրում էի անսահման մի ցնորդածի և ինքս մերձ էի խելագարության: Աստված իմ, գեթ մի անգամ տեսնեի նրան մոտիկից, գեթ մի անգամ լսեի նրա ձայնը: Գուցե հիամթափվեի ու արթնանայի մեղավանջից: Կամ, ով զիտե, գուցե կարողանայի նրա քայլայված հոգու մեջ գտնել մի առողջ թել, շոշափեի նրան իմ սիրո ջերմությամբ: Ո՞վ զիտե, գուցե դեռ կա միջոց նրան փրկելու: Ինչո՞ւ այդ բռնակալը չի բողոք ոչ ոքի մոտենալ նրան: Մի՞թե չի հասկանում եսամոլը, որ իր տեսքն ավելի բարդացնում է Ալինայի վիշտը, ուրեմն և ավելի գորեղացնում նրա հիվանդությունը: Մի՞թե չի բրոնում, որ վիրավորի վերքն ավելի է կածում, երբ նրա աշքերի ասցե է դաշույնը: Չի՞ պատահել, որ արքիներով ցնորդածի բանականությունը վերագրածել է Հանկարծակի, անսպասելի մի որևէ երջանիկ պատահարից, հոգեկան մի ցնցումից: Այո՛, այո՛, շատ է պատահել, ես կարգացել եմ բժշկական գրքերում, լսել եմ պահիմատրներից:

Այս էր միակ պահնցքը, որի շուրջը պտտում էին բոլոր իմ խոհերը, բոլոր իմ զգացումները, ոչ միայն արթուն ժամանակ, այլև զիշերացին երազների մեջ:

Բայց, ավա՞ղ, ճակատագիրն ինձ չէր վիճակել տեսնել նրան մոտիկից, խոսել նրա հետ...

Լսեցե՞ք: Մի օր բարձրահասակ մարդք տնից դուրս եկավ, բայց լուսամուտը լբացվեց: Նա լբացվեց և հետեւ օրը: Իսկ երրորդ օրն արդեն վաղ առավոտից բացվեցին բոլոր լուսամուտաները:

Առաջին անգամ ամրող չորս ամսվա ընթացքում, ես նկատեցի անիջալ բնակարանում ինչ-որ անսովոր իրարանցում:

Աղախինը շտապ-շտապ անցնում էր սենյակից սենյակ: Մերթընդմերթ այս կամ այն լուսամուտի առջև երևում էր բարձրահասակ տղամարդք իր մշտական մոռալ ու անշարժ գեմքով: Իսկ Ալինան չէր երևում:

Դոների առջև կանգ առավ մի կառք:

Մի անծանոթ մարդ իջավ կառքից շտապով և մտավ Աղովսկիների բնակարանը:

Իսկ Ալինան շկար: Ես սկսեցի անհանգստանալ, այնքան արդեն սովորել էի ամեն օր տեսնել նրան և ամեն օր հիանալ նրանով ու ամեն օր օրհնել կյանքը:

Որովհետև տանտիրուհիս արդեն զիտեր ամեն բան և իմ կողմից այլևս տմարդություն ու հիմարություն կլիներ կեղծել այդ բարի ու ազ-

նիվ կնոջ առջև, ուստի, երբ նա մտավ իմ սենյակը, իմ առաջին խոսքը հղավ.

— Պոլինա Նիկոլաևնա, ի՞նչ է պատահել Աղովսկիների բնակարանում:

— Ալինան հիվանդ է, — պատասխանեց այրին հակիրճ:

— Հիվանդ, — զուեցի ես գրեթե սարսափով:

— Այո, արդեն երեք օր է: Աղախինն ասաց: Զտեսա՞ք, որ բժիշկ եկավ: Այսօր կոնսուլիում է նշանակված:

Ահա թե ինչ: Ալինան հիվանդ է: Նա, իմ երազների առարկան: Եվ ես չեմ կարող ամեն բոպե, ամեն վայրկյան իմանալ նրա գրությունը: Չեմ կարող մանավանդ տեսնել նրան: Եվ նա շպիտի զիտենա, շպիտի զգա, թե կա մենքը, որ պատրաստ է իր տասնուինը տարեկան կյանքը զոհել նրա համար առանց մի վայրկյան տատանմելու և առանց որևէ ակրնեկալության, ինչպես մի մոլեուանդ հավատացյալ, որ խարուցին է նետվում հանուն իր հավատի:

Ես ասացի տանտիրուհու:

— Պոլինա Նիկոլաևնա, դուք սիրո՞ւմ եք ինձ:

— Թող վկա լինի ինքն աստված:

— Պոլինա Նիկոլաևնա, ես զիտեմ, որ ձեզ հայտնի է ամեն բան:

— Հայտնի է, — արտասանեց այրին, հառաշելով:

— Գիտեմ, որ ձեզ հայտնի են իմ տանջանքները:

— Քանի՞-քանի անգամ այս պատերի ետեւից եմ լսել ձեր դառը հեկեանքները: Միրտս է մորմոքվում, տեսնելով, թե ինչպես եք շորանում ուրի վրա:

— Այդ թողնենք, Պոլինա Նիկոլաևնա, այդ ովինչ: Հարցն Ալինայի մասին է: Նրա կյանքն է թանկ ինձ համար և ոչ իմը: Պոլինա Նիկոլաևնա, մի խնդիր ունեմ ձեզ, բարի եղեք կատարելու:

— Հրամայեցե՞ք:

— Գնացեք այս բոպեին Ալինայի մոտ:

— Ինչո՞ւ:

— Մի լուր բերելու ինձ համար: Ես ուզում եմ իմանալ որքան վտանգավոր է Ալինայի հիվանդությունը: Պոլինա Նիկոլաևնա, խնդրում եմ:

— Բայց ես ծանոթ շեմ նրանց հետ: Նրանք կարող են ինձ ընդունել: Մինչ օրս զեր ոչ ոք ուզք չի դրել նրանց տունը:

— Ո-ինչ, կարելի է: Հարեաններ եք: Ասացեք, թե մեկանում ընդունված է:

— Զգիտեմ, կաշխատեմ մի բան: իմանալ,— ասաց տանտիրուհիս անորոշ ու դուրս զնաց:

Հինգ կառքեր իրար ետևից, կարճ ընդմիջումներով, կանգնեցին անիծյալ տան առջև: Բժիշկներն էին, երկուսը ծեր, երեքը երիտասարդ: Այն ժամանակ ես մեծ հավատ ունեի դեպի թժկությունը, և յուրաքանչյուր բժիշկ ինձ համար մի տեսակ կախարդ էր ամենազոր: Ահա ինչու, նայելով այդ մարդկանց լուրջ ու հանգիստ դեմքերին, կազուրվեցի: Ա՛հ, ժտածեցի ես, նրանք կառողացնեն Ալինային ինչ հիվանդություն և ունենաւ: Նրանք կիրկեն նույնիսկ նրա հիվանդ հոգին: Եվ ես կտեսնեմ իմ սեղագեստին առողջ թե՛ մարմնապես և թե՛ հոգեպես իր ամբողջ գեղեցկությամբ:

Խորհրդակցությունը տեսեց երկա՞ր, երկա՞ր: Մրտի ուժգին տրոփյունով էի սպասում բժիշկների դուրս գալուն, հուսալով նրանց դեմքերի արտահայտությունից գուշակել Ալինայի վիճակը: Եվ մի վայրկյան անգամ հեռացաց իմ լուսամուտից:

Վերջապես նրանք դուրս եկան ամենքը միասին:

Բոլորի դեմքերն ուրախ էին, մանավանդ ծերունի բժիշկների: Խոսում էին բարձր ձայնով բոլորովին ուրիշ բաների մասին և բարձր ձայնով էլ ծիծաղում: Ա՛հ, ժտածեցի ես, այդ լավ նշան է: Ալինայի կյանքին վտանգ չի սպանում, այլապես այդ մարդիկ այդպես ուրախ ու զվարթ չէին զուրս գալ նրա մոտից: Հետո երբ ես ինքս բժիշկ դարձա, այո՛, Հետո միայն հասկացաց, թե մեր արհեստը նույն է, ինչ որ քահանայի արհեստը: Ժամանակի ընթացքում նա կոպտացնում է մեր սրտերը և դարձնում մեզ անտարբեր զեպի մահը: Քանի՞՛քանի անգամ ես իմ պացիենտների մահճակալից հեռացել եմ մայիսն երեսիս, տրամադրությունս անփոփխ, այն ժամանակ իսկ, երբ զպացել եմ մաշվան զարշելի հոտը:

Հուսամուտներից մեկի առջև երևաց Մրափիոն Ազովսկին: Ոչ մի փոփոխություն նրա մշտական անշարժ դեմքի վրա, ո՛չ ուրախ, ո՛չ տիսուր: Կարծես քար էր այդ մարզը:

Երեսց աղասինը նույնպես ոչ մի փոփոխություն: Այս ավելի կազուրեց ինձ: Ահա ինչու երբ տանտիրուհիս երեսց զոների մեջ, ես ասացի:

— Դատարկ բան է. Ալինան լուրջ հիվանդ չէ: Տեսա՞ք նրան:

— Գնացի, բայց տեսնել չկարողացա:

— Ինչո՞ւ:

— Ամաշեցի ներս մտնել Աղասինին հարցրի, տեղեկացա:

Նա կանգ առավ, հառաշեց:

— Ի՞նչ են որոշել բժիշկները, — գոշեցի ես:

— Աղասինը չգիտե: Ինչոր դեղ են սրսկել Ալինայի մարմնի մեջ, նա շատ թույլ է և շուտ-շուտ ուշաթափվում է: Դարմանող բժշկին պատվիրել են այս գիշեր Հեռանալ հիվանդի մոտից: Նա զնաց, երեկոյան կպա: Աղասինը լաց է լինում: Նա շարունակ կրկնում է. «Զգիտեք, չգիտեք որքան բարի տիրուչի էր նա այդ դժբախտությունից առաջ: Ոչ ոքի աշխարհի երեսին այնքան շեմ սիրել, որքան նրան»:

Զքացավ իմ լավատեսությունը, թուլացան իմ հույսերը: Զգացի, որ Ալինայի դրությունը լուրջ է: Եվ ուժասպառ ընկա աթոռի վրա: Արտասուրք վազուց էր խեղդում կոկորդս: Այլևս չկարողացա զսպել նրան և տվեցի աղատություն իմ մանկական խելառ հեկեկանքներին:

Բարի, զգանասիրու տանտիրուհիս մոտեցավ ինձ հանդարտ քայլերով և սկսեց միխթարել:

Իմ հեկեկանքների միջից լսում էի նրա հատ-հատ խոսքերը.

— Լավ, Ալինան չի մեռնիլ: Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ, զավակս: Ա՛հ, խելագար: Ո՞վ է այդ կինը քեզ համար, քո ի՞նչն է: Մի անգամ էլ հետք չես խոսել: Լավ, լավ, երեխա մի՛ լինիր, հանգստացիր: Ամոթ է, վերջապես, ի՞նչ կատեն, եթե լսեն մարդիկ: Աստված իմ, նա գժվում է, ես ինչ անհմ: Այս զգամանալի տղա:

Նա գրկել էր իմ գլուխն ու շոյում էր նրան ձեռքերով: Ա՛հ, որքան քնքուշ էին, որքան մայրական այդ աշխատավոր կոշտացած ձեռքերն ինձ համար այդ պահին և որքան կփափագեի, որ նրանք անվերջ շոյեին իմ գլուխը: Զգում էի իմ խելառությունը, զգում էի իմ ծիծաղելի լինելը, բայց չէի ամաշում այդ օտար ու օտարոտի կնողից:

Նկարագրե՞մ արդյոք, թե ինչպես անցկացրի այդ երեկոն, այդ գիշերը, հետեւյալ օրը, հետեւյալ գիշերը, ամբողջ տասնուշորս օր: Օ՛հ, անմոռանալի օրեր: Անքուն էի, հարկավ, թեև տանտիրուհու շանհանգրաւացնելու համար լամպարս հանդցնում էի: Տամնուշորս գիշերներ յուրաքամնչուր կես ժամ դուրս էի գալիս փողոց, կանգնում էի փակ լուսամուտի տակ, շոնչս զսպած, ականջ էի դնում զեպի Ազովսկիների ընակարանը: Զէ՞ որ մահը մեծ մասամբ գիշերներն է այցելում մարդկանց: Ես մտածում էի, եթե Ալինան մեռնե, կլսեմ նրա հավատարիմ աղասինի հեկեկանքները: Նրա ամուսնուց հեկեկանք չէի սպասում:

Եվ ոչ մի ձայն, ոչ մի շշուկ անգամ ամբողջ տասնուշորս գիշեր: Իսկ յերեկները տանտիրուհու միխաղաղ կրկնությունը:

— Ալինայի գրությունը անփոփխ է:

Առանձնապես անհանդիս էի վերջին գիշերը, որ ամբողջովին անց-

կացրի փողոցում: Լուսին չկար, անամպ, հստակ երկնակամարի վրա պսպղում էին աստղերն այնքան ուրախ, այնքան գվարթ, որքան տիսուր ու մռալլ էր իմ հոգին: Մի՞թե նրանք բոլորը միասին արժեին Ալինայի կյանքի մի ժամանություն, մի շնչին անդամ: Ա՛զ, թող կորչե ամբողջ տիեզերքը, միայն թե ապրե Ալինան:

— Ալինա, Ալինա, Ալինա,— արտասանում էին գիշերային լուսության մեջ իմ բորբոքված շրթունքները:

Եվ ոչ մի ձայն, ոչ մի շշուկ:

Վերջապես, ուժերս դավաճանեցին ինձ, լուսաբացին հագուստով պառկեցի անկողնակալիս վրա ու նիրհեցի, Տասնուշորս գիշեր գրեթե չէի քնել և նիրհեցի այն ժամին, երբ պիտի արթուն լինեի:

— Դուք քնա՞ծ եք, — լսեցի ես հանկարծ տանտիրուհու ձայնը և աշքերս բաց արի:

Նա կանգնած էր զլիս մոտ ձեռքերը կրծքի վրա ծալած:

— Ի՞նչ է պատահել, — գոշեցի ես, ոտքի թոշելով:

— Ալինան մեռավ:

Ես ոչինչ շասացի: Մի թուլլ ճիշ ակամա թուավ իմ կրծքից, և ես ուժասպառ նստեցի անկողնակալիս վրա ու զլուս թեքեցի կրծքիս:

Տանտիրուհիս ավելացրեց:

— Քահանայի անհեքը...

Մի ժամ անցած անիծյալ բնակարանում երևացին անծանոթ դեմքեր, Այլևս բոլոր լուսամուտները բաց էին: Խոհարարն ու աղախինը շտապշտապ կարդի էին բերում կահարասին: Մի ծերունի քահանա դուրս եկավ համբ քայլերով ու հեռացավ: Անշուշտ նա հաղորդություն էր տվել Ալինային: Աղախինը լալիս էր: Մի անգամ միայն Ալինայի ամուսինը երևաց լուսամուտներից մեջի առջև, նայեց մի քանի վայրկյան դեպի փողոց ու հեռացավ: Աստված՝ իմ, ոչ մի փոփոխություն այդ դեղնագույն, անշարժ դեմքի վրա: Նույն քարացած նայվածքը՝ ոսկրոտ ճակատի տակից:

Բժիշկ Ախուրյանը դարձյալ լոկց: Ես սպասում էի նրա պատմվածքի վերջին: Բայց նա լուս էր և արտասովոր հայացքով նայում էր հեռու ու հեռու:

— Դուք գնացի՞ք նրա թաղմանը, — հարցրի ես նրա ծանր լոսությունը ընդհատելու համար:

— Ալինային շթաղեցին:

— Ինչպես:

— Այդ մարդը նրա դիակը ըմուել տվեց և տարավ իր ծննդովարը՝

Դրիմ, նա մինչև անգամ նրա անշունչ մարմնից չեր ուզում բաժանվել, ես գնացի նրա հուղարկավորությանը: Ոչ ոք չեր ուզեկցում նրա դադաղը, բացի մի քանի քահանաներից, ինձանից, խոհարարից, աղախինից, կողկակարից՝ իր կողջ հետ և տանտիրուհուց: Ո՞վ էր ճանաչում Ալինային: Ես տեսա նրան մոտիկից: Միակ տեսակցությունն իմ առաջին և միակ իսկական սիրո, որ ունեցաւ ես ձգեցի նրա դագաղի վրա դեղին վարդերի մի փունչ: Ա՛զ, որքան նրա դեմքի գովնը նման էր այդ վարդերին: Նրան հագցրել էին իր մշտական մետաքսյա սև զգեստը: Զար նրա կրծքի վրա սովորական դեղին վարդը: Ես զգացի, որ ամուսինն է պոկել այդ վարդը նրա կրծքից: Զգացի, որովհետև երբ ես իմ փունջը ձգեցի դագաղի վրա, նա, կարծես, մի տեսակ ցնցվեց, նայեց ինձ մռալլ հայացքով: Նա մի շարժում արավ դեպի դագաղը, կարծես, փունջը գեն ձգելու նպատակով, բայց կանգ առավ, երեսը դարձնելով ինձնից: Խսկ նա, դագաղի ապակու միջից ժպտաց ինձ: Այն անշարժ, այն ծով ու հեռավոր ժպիտով, որ ես առաջին անգամ տեսա նրա դեմքի վրա: Այդ ժպիտն այսօր էլ իմ ընկերոն է, իմ երկրորդ էությունը, որ մինչև գերեզման պիտի հետևե ինձ և ո՞վ գիտե գուցե գերեզմանից էլ դեն: Գիտե՞ք, ես շատ եմ ապրել, շատ եմ մտածել ու զգացել այս երեսուն տարվա ընթացքում: Սիրել եմ, սիրվել, ճանաչել եմ կանանց և կեկել այն համոզմունքին, որ մի և միմիայն մի անգամ եմ սիրել: Բարեկամ՝ սեր չէ այն, ինչ որ մարդիկ սովոր են անվանել սեր, այսինքն՝ շոշափելին, առարկայականը: Բարեկամս, սեր չէ կինը, որի հետ խոսում ենք, բացատրվում, վիճում, կովում, հաշտվում, նորեն կովելու ու նորեն հաշտվելու համար: Սեր չէ կինը, որին դրկում ենք, համբուրում, պաշտում, որպեսզի վայելենք և վայելում ենք, որպեսզի ապականենք: Ո՞ւ դա սեր չէ: Սերը երազ է և երազ էլ պիտի թողնել նրան: Սերը հավիտենական է, անջնջելի, անմոռանալի, բայց անճաշակելի: Նա մի շող է, որ չի մարում, բայց և չի որսկում ինչպես թոշուն, մի դաղափար, որը չի հնանում, բայց և չի գործադրվում ինչպես մարմնավոր վայելիք միջոց, մի միտք, որ չի մաշվում, բայց և չի յուրացվում և մարմնանում: Սոսկալի է նրա պահանջը, բայց և հաճելի, օօ՛, անսահման հաճելի և անսահման թունավոր, պայքարել, երբեք շաղթելու և ձգտել, երբեք շամանելու համար: Նա դրամա չէ, որ ովնի հանգույց, ընթացք ու վախճան: Նա մի տրաքեղիք է առանց միջարարների ու առանց դագարների: Նա միայն սկիզբ ու երբեք վախճան, միայն ծնունդ և երբեք մա՞...

— Խսկական սիրը Ալինա է, — ավարտեց բժիշկ Ախուրյանը և ոտքի կանոնից: — Ես վերջացրի:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԻՐՎԱՆՋԱՂԵ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՐ

Խմբագիր՝ Ս. Ս. Հակոբյան
Նկարիչ՝ Հ. Ա. Կարապետյան
Գեղ. խմբագիր՝ Բ. Վ. Մազմանյան
Տեխն. խմբագիր՝ Մ. Ն. Իավրյան
Վերսուլող սրբագրիչ՝ Ռ. Ս. Հովհաննես

ИБ 2141

Հանձնված է շարվածքի 03. 02. 1986 թ.: Ստորագրված է տպագրության՝ 3. 06. 1986 թ.: Թուղթ № 3, չափար՝ $60 \times 84^1/16$: Տպագրությունը՝ բարձր Տառատևական՝ «Գրքի սովորական»: Հրատ. 9,56 մամ., տպ. 11,0 մամ., պայմ. 10,23 մամ., տպ. 10,5 դոն. թ. օտ.: Պատվեր 197: Տպագանակ՝ 50 000:

Գինը՝ 95 կուգ.

«Լույս» հրատարակություն, Երևան-9, Կիրովի 19 ա:

Издательство «Луис», Ереван-9, ул. Кирова, 19 а.

ՀԵՍ Հրատարակությունների, պոլիգրոֆիայի և գրքի առևտիք գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Աւալիրյան 55:

Гипография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван, ул. Алавердяна, 65.